Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1112[2]-04.04.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության (2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337) օրենքի 40-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի վերջին 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն»:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «8-րդ» կետ.

«8) տալիս է համայնքի տարածքում խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն»:

Հոդված 2. Օրենքի 84-րդ հոդվածում լրացնել նոր՝ 13-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝

«13. Օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթեցում անցած «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

NN	Առաջարկության հեղինակը	Առաջարկությունների և դիտողությունների բովանդակությունը	Արդյունքը
1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն	1.Դիտողությունները և առաջարկությունները վերաբերում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան մասերի, կետերի համարակալումները համապատասխանեցնելուն և խմբագրելուն: 2. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերը միմյանց չեն համապատասխանում, մասնավորապես՝ 1-ին մասի համաձայն համայնքի ղեկավարը տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն: Մինչդեռ նշված թույլտվության մասով հոդվածի 2-րդ մասում բացառություն է սահմանվում: Ուստի առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը խմբագրել՝ համապատասխանեցնելով 1-ին մասի դրույթներին:	Առաջարկություններն ընդունվել են: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Առաջարկությունն ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: